

## ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման 2014թ. հաշվետվության վերլուծական հավելվածի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում առկա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) ռիսկերի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու նպատակով 2010 և 2014 թվականներին ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ընդգրկված շահագրգիռ գերատեսչությունների կողմից իրականացվել է ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատում (այսուհետ՝ ՌԱԳ)՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ Միջգերատեսչական հանձնաժողով) կողմից հաստատված մեթոդաբանության:

Հաշվի առնելով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի դինամիկ ու զարգացող բնույթը, ՓԼ/ԱՖ ռիսկերը ժամանակին և արդյունավետ կերպով վերահսկելու նպատակով ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատումը նշված մեթոդաբանության համաձայն իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան 3 տարին մեկ անգամ: Համապատասխանաբար, 2016 թվականի վերջին ռիսկերի գնահատման հերթական շրջափուլն իրականացնելու նպատակով նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Միջգերատեսչական հանձնաժողովին կից աշխատանքային խմբի կողմից առաջարկվել, իսկ Միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 1-ի նիստում որոշվել է վերանայել ՌԱԳ այն ոլորտները, ա) որոնցում տեղի են ունեցել էական զարգացումներ, և բ) որոնց առնչությամբ Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից իրականացված ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում գնահատող-փորձագետների կողմից ներկայացվել են համապատասխան առաջարկներ:

Ըստ այդմ, ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատումն ընդգրկել է հետևյալ ոլորտները.

- Փողերի լվացման սպառնալիքները,
- Փողերի լվացման միտումները,
- Լատենտային հանցավորությունը,
- Անդրսահմանային հոսքերը,

- Ստվերային տնտեսությունը և կանխիկի շրջանառությունը,
- Կոռուպցիան,
- Փողերի լվացման և նախորդող հանցագործությունների նպատակով չարաշահման տեսանկյունից իրավաբանական անձանց խոցելիությունը,
- Ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ոչ առևտրային կազմակերպությունների չարաշահման ռիսկը:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով՝ ստորև ներկայացվում են ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման վերլուծական հավելվածում 2014-2016թթ. համար կատարված հիմնական եզրահանգումները:

Փողերի լվացման սպառնալիքների գնահատման նպատակով վերլուծվել են 2014-2016թթ. ժամանակահատվածում նախորդող հանցագործությունների մասով հարուցված քրեական գործերը, կայացված մեղադրական դատավճիռները, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանցից ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին (այսուհետ՝ ՖԴԿ) ներկայացված կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունները: Վերլուծության արդյունքներով ՓԼ տեսանկյունից ռիսկային են համարվել հետևյալ 5 հանցագործությունները՝ խարդախությունը (ՀՀ ՔՕ 178-րդ հոդված), գողությունը (ՀՀ ՔՕ 177-րդ հոդված), յուրացնելը կամ վատնելը (ՀՀ ՔՕ 179-րդ հոդված), մաքսանենգությունը (ՀՀ ՔՕ 215-րդ հոդված) և հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը (ՀՀ ՔՕ 205-րդ հոդված):

Հարկ է նշել, որ ներկայացված ԿԳՀ-ների, ինչպես նաև իրավապահ մարմիններին ՖԴԿ-ի կողմից տրամադրված ծանուցումների հիմքում ընկած՝ նախորդող հանցագործությունների վերաբերյալ վարկածները համադրելի են ՓԼ գործերով դիտարկվող ժամանակահատվածում հարուցված քրեական գործերի և կայացված մեղադրական դատավճիռների հիմքում ընկած նախորդող հանցագործությունների հետ:

Փողերի լվացման միտումների տեսանկյունից աճի միտում են արձանագրել նոր պրոդուկտների և ծառայությունների մատուցման նոր եղանակների (ինչպիսիք են առցանց POS տերմինալները, ինտերնետային բանկային ծառայությունները, շարժական բանկային ծառայությունները, թվային դրամապանակները և այլն) կիրառությամբ բարդ կամ անսովոր գումարներով և պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն կամ չեն համապատասխանում հաճախորդի, վերջինի

գործարար կերպարի և միջոցների աղբյուրների վերաբերյալ կազմակերպության ունեցած պատկերացումներին:

Նոր տեխնոլոգիաների կիրառությամբ փողերի լվացման նորահայտ միտումների մասով իրականացվել է ուսումնասիրություն վիրտուալ արժույթների հետ կապված ռիսկերի վերաբերյալ՝ ուսումնասիրության արդյունքները տրամադրելով ֆինանսական հաստատություններին: Չնայած ներկա պահին Հայաստանում վիրտուալ արժույթների հետ կապված ռիսկերի փաստացի բացակայությանը, այդ ոլորտը շարունակում է մնալ մշտական դիտարկման ներքո:

Լատենտային հանցավորության տեսանկյունից ՀՀ հանցավորության կառուցվածքում օբյեկտիվորեն ավելի բարձր լատենտայնություն ունեն կոռուպցիոն հանցագործությունները: Բարձր լատենտայնությունը հատկանշական է նաև հարկային և մաքսային, սեփականության դեմ ուղղված և թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններին, ուստի, այս հանգամանքով պայմանավորված՝ փողերի լվացման ռիսկերը չեն կարող համարվել ցածր: Միևնույն ժամանակ, վերլուծության շրջանակներում մի կողմից՝ ուսումնասիրված հանցագործությունների գրանցված ցուցանիշների, մյուս կողմից՝ իրականացված հարցումների հիման վրա փորձագիտական մոտավոր գնահատականների համադրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում վերջին տարիներին նկատվում է լատենտային հանցավորության կայուն նվազում:

Ինչ վերաբերում է անդրսահմանային տեղաշարժերի հետ կապված հնարավոր ՓԼ/ԱՖ ռիսկերին, մարդկանց անդրսահմանային տեղաշարժերի հետ կապված ռիսկեր գրեթե առկա չեն: Իրականացված վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ ՀՀ-ն միջազգային կամ տարածաշրջանային ֆինանսական կենտրոնի որևէ հատկանիշներով չի բնութագրվում, իսկ արտաքին առևտրաշրջանառության գումարային արտահայտությունը և համապատասխան երկրների հետ երկկողմ անդրսահմանային փոխանցումների ծավալները համադրելի են: Բոլոր այն դեպքերում, երբ հայտնաբերվում են անհամապատասխանություններ հաճախորդի գործարար բնութագրի, կատարվող գործարքների նպատակների կամ գումարի հետ, ինչպես նաև, առհասարակ, երբ կասկածներ են առաջանում իրականացվող գործարքների իրավաչափության տեսանկյունից, ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ հաշվետվության տրամադրող անձանց տրվում են հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու, գործարքների մերժման, կասեցման կամ գործարար հարաբերության դադարեցման հանձնարարականներ:

Վերլուծության շրջանակներում անդրադարձ է կատարվել ստվերային տնտեսության բնորոշմանը, ՀՀ-ում ստվերային տնտեսության և կանխիկի շրջանառության ծավալներին, վիճակագրական տվյալների հիման վրա ուսումնասիրվել են ստվերային տնտեսության բաղկացուցիչ հանցագործությունների, այդ թվում՝ հնարավոր փողերի լվացման ծավալները՝ հաշվի առնելով նաև այդ հանցագործությունների լատենտայնությունը: Ամփոփվել են փողերի լվացման դեմ պայքարի շրջանակներում իրավասու մարմինների համագործակցության արդյունքները, ինչպես նաև ստվերային տնտեսության դեմ պայքարի, այդ թվում՝ կանխիկի շրջանառության կրճատման նպատակով մինչ այժմ իրականացված և ապագայում իրականացվելիք միջոցառումները:

Վերլուծությունն անդրադարձել է ստվերային տնտեսության և կանխիկի շրջանառության տեսանկյունից ռիսկային ոլորտներին և ռիսկերի զսպման նպատակով իրականացված միջոցառումներին: Մասնավորապես՝ անշարժ գույքի առուվաճառքի գործարքներում կանխիկի շրջանառության ծավալները համարվել են հարաբերականորեն ռիսկային խոշորածավալ գործարքների դեպքում, ինչի կապակցությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում իրականացվել են համապատասխան փոփոխություններ՝ արգելելով առուվաճառքի գործարքներում 50 միլիոն դրամը գերազանցող մասով կանխիկ եղանակով վճարում կատարելը: Վերլուծության համաձայն կանխիկի շրջանառության ծավալները, ընդհանուր առմամբ, տարեցտարի հետզհետե նվազում են:

Փողերի լվացման և նախորդող հանցագործությունների նպատակով իրավաբանական անձանց չարաշահման տեսանկյունից խոցելիությունների ուսումնասիրության համաձայն՝ համեմատաբար ավելի խոցելի են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները և փակ բաժնետիրական ընկերությունները, որոնք կարող են օգտագործվել իրական շահառուներին թաքցնելու նպատակով: Նշված կազմակերպատիրական ձևերի հիմնական առանձնահատկությունը ընկերության պարտավորությունների համար մասնակից ֆիզիկական/ իրավաբանական անձից անկախ ընկերության ինքնուրույն գույքային պատասխանատվությունն է: Միաժամանակ, իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությանն առնչվող որոշ օրենսդրական թերություններ լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում ՓԼ սպառնալիքների դեմ պայքարի ճանապարհին: Մասնավորապես, բացակայում է որևէ ֆորմալ մեխանիզմ՝ ստուգելու, թե արդյոք իրավաբանական անձանց հիմնական հատկորոշիչների կամ իրական շահառուների

վերաբերյալ տվյալների փոփոխությունները ծանուցվել են Պետական ռեգիստրին: Բացի այդ, իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը չներկայացնելու համար որևէ պատասխանատվություն սահմանված չէ:

Ահաբեկչության ֆինանսավորման նպատակով չարաշահման ռիսկայնության տեսանկյունից վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում գրանցված և գործող ոչ առևտրային կազմակերպությունները: Մասնավորապես, ուսումնասիրվել են վերջինների գործունեությունը կարգավորող օրենքները, ինչպես նաև հնարավոր առնչությունը ահաբեկչության ֆինանսավորման տեսանկյունից ռիսկային երկրների հետ: Վերլուծության արդյունքներով պարզ է դարձել, որ ՖԱԹՖ-ի սահմանմանը համապատասխանում են ՀՀ-ում գրանցված և գործող ՈԱԿ-ների թվում գերակշիռ մաս կազմող հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ), հիմնադրամները, ինչպես նաև իրենց գործունեության բնույթով պայմանավորված՝ կրոնական կազմակերպությունները: Մյուս կազմակերպությունները (օրինակ՝ արհեստակցական կազմակերպությունները, համատիրությունները, սպառողական կոոպերատիվները և այլն) իրենց կազմակերպարավական ձևի, գործունեության ուղղությունների և բնույթի առնչությամբ առկա օրենսդրական կարգավորումներով պայմանավորված՝ որևէ կերպ ենթակա չեն ԱՖ նպատակով չարաշահման ռիսկի:

Միաժամանակ, ՖԱԹՖ-ի սահմանմանը համապատասխանող ՈԱԿ-ների՝ ԱՖ նպատակով չարաշահման ռիսկը գնահատվել է ցածր՝ հաշվի առնելով դրանց հիմնական բնութագրիչները, պետական գրանցման, հաշվետվողականության և վերահսկողության մասով առկա կարգավորումները, վերջինների՝ ԱՖ տեսանկյունից ռիսկային երկրների հետ առնչությունների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև Հայաստանում ահաբեկչական գործունեության և ահաբեկչության ֆինանսավորման համար նպաստավոր նախապայմանների բացակայությունը: